

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

24 . Տեպտեմբեր 2019թ.

N 33 Ա

ք. Ստեփանակերտ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 15-ի N 165-Ա որոշումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Արցախի Հանրապետության տարածքի մակերևութային ջրերի ուսումնասիրության համար անհրաժեշտ դաշտային աշխատանքների և նմուշների լաբորատոր հետազոտությունների ապահովման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

- | | |
|----------------------|--|
| 1) Գոհար Գրիգորյան | Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման բաժնի պետ՝ խմբի ղեկավար |
| 2) Էլլադա Արամյան | նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների կառավարման և բնապահպանության քաղաքականության բաժնի պետ |
| 3) Ինգա Գասպարյան | նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների կառավարման և բնապահպանության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ |
| 4) Արայիկ Ասրյան | նախարարության աշխատակազմի կենսաբազմազանության և ջրերի ու մթնոլորտի վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ |
| 4) Վարդիթեր Նարինյան | նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության կենսառեսուրսների, ջրային ռեսուրսների կառավարման բաժնի առաջատար մասնագետ |

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ աշխատանքներն իրականացնել սույն թվականի մարտի 27-ից դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակաշրջանում, կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնել նախարարի տեղակալ Ալեքսանդր Գասպարյանին մինչև սույն թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Նախարարի տեղակալ Ալեքսանդր Գասպարյանին՝ ծրագրի արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը ներկայացնել նախարարին մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը:

4. «Արցախի Հանրապետության տարածքի մակերևութային ջրերի մոնիթորինգի 2019 թվականի ծրագիր»-ի անմիջական վերահսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի տեղակալ՝ Ալեքսանդր Գասպարյանին:

5. Նախարարության աշխատակազմի քարտուղարության պետին՝ հրամանը հասցնել նախարարի տեղակալներին, աշխատակազմի ղեկավարին, բնապահպանական և ընդերքի պետական տեսչության պետին, բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության պետին, աշխատանքային խմբի անդամներին՝ իրենց վերաբերող մասով:



Ֆ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ